ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՍՐԲԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 5 Յուլիս 2020 | 170 | DIMANCHE, 5 Juillet 2020

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ե ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ
ՏՕՆ ԳԻՒՏԻ ՏՓՈՅ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
CINQUIÈME DIMANCHE APRÈS LA PENTECÔTE.
FÊTE DE LA DÉCOUVERTE DE LA CASSETTE
DE LA MÈRE DE DIEU

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(8.31-10.4)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

(13.24-30)

Les lectures de la Bible d'aujourd'hui :

ROMAINS

8.31-10.4

MATTHIEU

13.24-30

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԳԷՈՐԳ ՔՀՆՅ. ԱԲԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE GEVORG APYAN

Առաւօտեան ժամերգութիւն ժամը-	**9:30-ին**
Office Matines à	**9h30**
Ս. Պատարագ- ուղիղ սփռում ժամը-	**10:30-ին**
La Sainte Messe – En direct à	**10h30**
Հոգեհանգիստ - ուղիղ սփռում ժամը-	**12:30-ին**
Office de Requieme – En direct à	**12h30**

DIACRES - ACOLYTES

Organist: M Vahram Sargsyan

Choir: Emma et Zara Sargsyan

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Les lectures de dimanche

The Sunday Readings

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(8.31-10.4)

Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն համար. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ։ Ան որ իր Որդիին չխնայեց, հապա մեր ամենուն համար մատնեց զանիկա, ալ ի՞նչպէս անոր հետ բոլոր բաները մեզի չի պարգեւեր։ Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր կ՚ըլլայ։ Աստուած է որ կ՚արդարացնէ։ Ուրեմն ո՞վ է որ կը դատապարտէ։ Քրիստոս է որ մեռաւ, մանաւանդ որ յարութիւն ալ առաւ ու Աստուծոյ աջ կողմն է, որ նաեւ մեզի համար բարեխօսութիւն կ՚ընէ։ Ուրեմն ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսին սէրէն. տառապա՞նքը, կամ նեղութի՞ւնը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ վտա՞նգը, կամ սո՞ւրը. Ինչպէս գրուած է. «Ամէն օր քեզի համար կը սպաննուինք. մորթուելու ոչխարի պէս կը սեպուինք». Հապա այս ամէն բաներուն մէջ ա՛լ աւելի յաղթող կ՚ըլլանք անո՛վ, որ մեզ սիրեց։ Վասն զի ես հաստատ գիտեմ թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ զօրութիւնները, ո՛չ ներկայ բաները, ո՛չ գալու բաները, Ո՛չ բարձրութիւնը, ո՛չ խորունկութիւնը եւ ո՛չ ուրիշ արարած կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է։

Ստոյգը կ՚ըսեմ Քրիստոսով ու չեմ ստեր, իմ խիղճս ալ ինծի կը վկայէ Սուրբ Հոգիով, Որ մեծ տրտմութիւն է ինծի ու իմ սրտիս ցաւը անպակաս է։ Քանզի ես ինքս կը փափաքէի նզովուիլ Քրիստոսէն, մարմնի կողմէ իմ եղբայրներուս ու ազգականներուս համար, Որոնք իսրայելացի են. որոնցն է որդեգրութիւնը, փառքը, ուխտերը, օրէնսդրութիւնը, պաշտօնն ու խոստումները։ Իրենցն են նահապետները, Քրիստոս ալ իրենցմէ եկաւ մարմնի կողմանէ, որ ինքը օրհնեալ Աստուած է ամենուն վրայ յաւիտեանս։ Ամէն։ Բայց Աստուծոյ խօսքը երբեք գետին ինկած չէ. քանզի ոչ թէ ամէն անոնք որ Իսրայէլէն են՝ Իսրայելացի են Եւ ոչ թէ Աբրահամին սերունդ ըլլալնուն համար ամէնքը որդիներ են. այլ «Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի»։ Այսինքն՝

ո՛չ թէ անոնք որ մարմնին որդիներ են՝ Աստուծոյ որդիներ ալ են, հապա խոստումի որդիները սերունդ կը սեպուին։ Վասն զի խոստումը այս էր, թէ՝ «Երբ դառնամ՝ Սառան որդի մը պիտի ունենայ»։ Ո՛չ միայն այսքան, հապա Ռեբեկայէն ալ յայտնի է որ յղացաւ մէկէն, այսինքն՝ մեր Իսահակ հօրմէն։ Վասն զի տղաքը դեռ չծնած եւ դեռ աղէկ կամ գէշ բան մը չգործած, որպէս զի Աստուծոյ նախասահմանութիւնը հաստատ մնայ ընտրութեանը պէս, Ո՛չ թէ գործերէն, հապա անկէ՛ որ կանչեց, իրեն ըսուեցաւ թէ՝ «Մեծը պզտիկին պիտի ծառայէ». ինչպէս գրուած է թէ՝ «Յակոբը սիրեցի, բայց Եսաւը ատեցի»։

Ուրեմն ի՞նչ ըսենք։ Միթէ Աստուծոյ քով անիրաւութի՞ւն կայ։ Քա՛ւ լիցի։ Վասն զի Մովսէսին կ՚ըսէ. «Որու որ պիտի ողորմիմ՝ կ՚ողորմիմ ու որու վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ»։ Ուրեմն մարդուն ուզելէն կամ ջանքէն չէ, հապա Աստուծմէ՝ որ կ՚ողորմի։ Քանզի գիրքը Փարաւոնին կ՚ըսէ. «Անոր համար քեզ վերցուցի, որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի»։ Ուստի որո՛ւ որ ուզէ՝ կ՚ողորմի եւ որը ուզէ՝ կը խստացնէ։

Ուրեմն ինծի պիտի ըսես թէ՝ «Ա՛լ ինչո՞ւ մեղադիր կ՚ըլլայ. վասն զի ո՞վ կրնայ անոր կամքին դէմ դնել»։ Բայց դուն ո՞վ ես, ո՛վ մարդ, որ Աստուծոյ հակառակ պատասխան կու տաս։ Միթէ ստեղծուածը իր Ստեղծողին կրնա՞յ ըսել թէ «Զիս ինչո՞ւ այդպէս շինեցիր»։ Բրուտը իշխանութիւն չունի՞ կաւին վրայ՝ նոյն զանգուածէն ամաններ շինելու։ Ոմանքը՝ պատուի, ուրիշներ՝ անարգանքի համար։ Արդ՝ ի՞նչ կըրնայ ըսել մէկը, եթէ Աստուած իր բարկութիւնը եւ զօրութիւնը ցուցնելէ առաջ, շատ համբերութիւն եւ երկայնամտութիւն ցոյց տայ ա՛յն անօթներուն, որոնք բարկութեան առարկայ եղած են եւ կորուստի դատապարտուած, Եւ կամ եթէ ուզէ իր փառքին ճոխութիւնը ցուցնել ողորմութիւն գտնող անօթներուն, այն փառքին համար, որ նախապէս պատրաստեց. Այսինքն՝ մեզի՝ որ կանչեց, ո՛չ թէ միայն Հրեաներէն, հապա հեթանոսներէն ալ. Ինչպէս Ովսէէի մէջ ալ կ՚ըսէ. «Իմ ժողովուրդս չեղողը ‘իմ ժողովուրդս’ պիտի կոչեմ ու սիրելի չեղողը՝ ‘սիրելի’։ Այն տեղ՝ ուր անոնց ըսուեցաւ թէ՝ ‘Դուք իմ ժողովուրդս չէք’, հոն անոնք ‘կենդանի Աստուծոյ որդիները’ պիտի կոչուին»։ Եսայի ալ Իսրայէլի համար կ՚աղաղակէ. «Եթէ Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւազին չափ ալ ըլլայ, միայն մնացորդ մը պիտի ազատի։ Քանզի Տէրը համառօտ եւ կտրուկ կ՚ընէ արդարութեամբ. վասն զի Տէրը կարճ բան մը պիտի ընէ երկրի վրայ»։ Եւ ինչպէս Եսայի նախապէս ըսաւ. «Եթէ

զօրաց Տէրը մեզի սերունդ թողուցած չըլլար, մենք Սոդոմի պէս պիտի ըլլայինք ու Գոմորի պիտի նմանէինք»։

Ուրեմն ի՞նչ ըսենք։ Թէ հեթանոսները որոնք արդարութեան չէին հետեւեր՝ արդարութեան հասան, ա՛յն արդարութեան՝ որ հաւատքէն է. Բայց Իսրայէլ, որ արդարութեան օրէնքին կը հետեւէր, արդարութեան օրէնքին չհասաւ։ Ինչո՞ւ համար. վասն զի ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ օրէնքին գործերով ուզեց արդարանալ։ Անոնք գայթակղութեան վէմին վրայ գլորեցան. Ինչպէս գրուած է. «Ահա Սիօնի մէջ գայթակղութեան քար մը կը դնեմ ու գլորելու վէմ մը. եւ ամէն ով որ անոր հաւատայ, պիտի չամչնայ»։

Եղբայրնե՛ր, սրտանց կը փափաքիմ ու կ՚աղօթեմ Աստուծոյ, որ Իսրայէլը փրկէ։ Վասն զի ես կը վկայեմ անոնց համար թէ Աստուծոյ համար նախանձախնդիրներ են, թէեւ ո՛չ գիտակցաբար։ Վասն զի անոնք Աստուծոյ արդարութիւնը չճանչնալով՝ իրենց արդարութիւնը հաստատել ուզելով, Աստուծոյ արդարութեան չհնազանդեցան։ Քանզի օրէնքին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալի արդարութեան համար։

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(13.24-30)

Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ. «Երկնքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց։ Երբ մարդիկ կը քնանային իր թշնամին եկաւ ու ցորենին մէջ որոմ ցանեց եւ գնաց։ Երբ խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ յետոյ որոմն ալ երեւցաւ։ Ուստի տանտիրոջ ծառաները մօտեցան ու իրեն ըսին. ‘Տէ՛ր, չէ՞ որ դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր. ուրեմն որոմը ուրկէ՞ է’։ Անիկա ըսաւ անոնց. ‘Թշնամի մարդ մը ըրած է ատիկա’։ Ծառաները իրեն ըսին. ‘Հիմա կ՚ուզե՞ս որ երթանք զանոնք քաղենք’։ Ան ալ ըսաւ. ‘Ո՛չ, չըլլայ թէ որոմը քաղած ատեննիդ ցորենն ալ անոր հետ փրցնէք։ Թող տուէ՛ք որ երկուքն ալ մէկտեղ աճին մինչեւ հունձքի ատենը։ Եւ հունձքի ատենը հնձողներուն պիտի ըսեմ. ‘Առաջ որոմը քաղեցէք, խուրձ խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք’»։

ROMAINS
8.31-10.4

Lui qui n'a point épargné son propre Fils, mais qui l'a livré pour nous tous, comment ne nous donnera-t-il point aussi toutes choses avec lui? Qui intentera accusation contre les élus de Dieu? Dieu est celui qui justifie. Qui sera celui qui condamnera? Christ est celui qui est mort, et qui plus est, qui est ressuscité, qui aussi est à la droite de Dieu, et qui même prie pour nous. Qui est-ce qui nous séparera de l'amour de Christ? sera-ce l'oppression, ou l'angoisse, ou la persécution, ou la famine, ou la nudité, ou le péril, ou l'épée? Ainsi qu'il est écrit : nous sommes livrés à la mort pour l'amour de toi tous les jours, et nous sommes estimés comme des brebis de la boucherie.

Au contraire, en toutes ces choses nous sommes plus que vainqueurs par celui qui nous a aimés.

Car je suis assuré que ni la mort, ni la vie, ni les Anges, ni les Principautés, ni les Puissances, ni les choses présentes, ni les choses à venir, Ni la hauteur, ni la profondeur, ni aucune autre créature, ne nous pourra séparer de l'amour de Dieu, qu'il nous a [montré] en Jésus-Christ notre Seigneur.

Je dis la vérité en Christ, je ne mens point, ma conscience me rendant témoignage par le Saint-Esprit, Que j'ai une grande tristesse et un continuel tourment en mon cœur. Car moi-même je souhaiterais d'être séparé de Christ pour mes frères, qui sont mes parents selon la chair; Qui sont Israëlites, desquels sont l'adoption, la gloire, les alliances, l'ordonnance de la Loi, le service divin, et les promesses. Desquels [sont] les pères, et desquels selon la chair [est descendu] Christ, qui est Dieu sur toutes choses, béni éternellement; Amen!

Toutefois il ne se peut pas faire que la parole de Dieu soit anéantie; mais tous ceux qui sont d'Israël, ne sont pas pourtant Israël. Car pour être de la semence d'Abraham ils ne sont pas tous ses enfants; mais, c'est en Isaac qu'on doit considérer sa postérité. c'est-à-dire, que ce ne sont pas ceux qui sont enfants de la chair, qui sont enfants de Dieu; mais que ce sont les enfants de la promesse, qui sont réputés pour semence. Car voici la parole de la promesse : je viendrai en cette même saison, et Sara aura un fils. Et non seulement cela; mais aussi Rebecca, lorsqu'elle conçut d'un, [savoir] de notre père Isaac. Car avant que les enfants fussent nés, et qu'ils eussent fait ni bien ni mal, afin que le dessein arrêté

selon l'élection de Dieu demeurât, non point par les œuvres, mais par celui qui appelle; Il lui fut dit : le plus grand sera asservi au moindre; Ainsi qu'il est écrit : j'ai aimé Jacob, et j'ai haï Esaü.

Que dirons-nous donc : y a-t-il de l'iniquité en Dieu? à Dieu ne plaise! Car il dit à Moïse : j'aurai compassion de celui de qui j'aurai compassion; et je ferai miséricorde à celui à qui je ferai miséricorde. Ce n'est donc point du voulant, ni du courant : mais de Dieu qui fait miséricorde. Car l'Ecriture dit à Pharaon : je t'ai fait subsister dans le but de démontrer en toi ma puissance, et afin que mon Nom soit publié dans toute la terre. Il a donc compassion de celui qu'il veut, et il endurcit celui qu'il veut.

Or tu me diras : pourquoi se plaint-il encore? car qui est celui qui peut résister à sa volonté? Mais plutôt, ô homme, qui es-tu, toi qui contestes contre Dieu? la chose formée dira-t-elle à celui qui l'a formée : pourquoi m'as-tu ainsi faite? Le potier de terre n'a-t-il pas la puissance de faire d'une même masse de terre un vaisseau à honneur, et un autre à déshonneur? Et [qu'est-ce], si Dieu en voulant montrer sa colère, et donner à connaître sa puissance, a toléré avec une grande patience les vaisseaux de colère, préparés pour la perdition? Et afin de donner à connaître les richesses de sa gloire dans les vaisseaux de miséricorde, qu'il a préparés pour la gloire; Et qu'il a appelés, [c'est à savoir] nous, non seulement d'entre les Juifs, mais aussi d'entre les Gentils.

Selon ce qu'il dit en Osée : j'appellerai mon peuple celui qui n'était point mon peuple; et la bien-aimée, celle qui n'était point la bien-aimée;

Et il arrivera, qu'au lieu où il leur a été dit : vous n'êtes point mon peuple, là ils seront appelés les enfants du Dieu vivant.

Aussi Esaïe s'écrie au sujet d'Israël : quand le nombre des enfants d'Israël serait comme le sable de la mer, il n'y en aura qu'un [petit] reste de sauvé. Car le Seigneur consomme et abrège l'affaire en justice : il fera, dis-je, une affaire abrégée sur la terre.

Et comme Esaïe avait dit auparavant : si le Seigneur des armées ne nous eût laissé quelque semence, nous eussions été faits comme Sodome, et eussions été semblables à Gomorrhe.

Que dirons-nous donc? que les Gentils qui ne cherchaient point la justice, ont atteint la justice, la justice, dis-je, qui est par la foi. Mais Israël cherchant la Loi de la justice, n'est point parvenu à la Loi de la justice. Pourquoi? parce que ce n'a point été par la foi, mais comme par les œuvres de la Loi; car ils ont heurté contre la pierre d'achoppement.

Selon ce qui est écrit : voici, je mets en Sion la pierre d'achoppement; et la pierre qui occasionnera des chutes ; et quiconque croit en lui ne sera point confus. Mes frères, quant à la bonne affection de mon cœur, et à la prière que je fais à Dieu pour Israël, c'est qu'ils soient sauvés. Car je leur rends témoignage qu'ils ont du zèle pour Dieu, mais sans connaissance. Parce que ne connaissant point la justice de Dieu, et cherchant d'établir leur propre justice, ils ne se sont point soumis à la justice de Dieu. Car Christ est la fin de la Loi, en justice à tout croyant.

MATTHIEU
13.24-30

Il leur proposa une autre similitude, en disant : le Royaume des cieux ressemble à un homme qui a semé de la bonne semence dans son champ. Mais pendant que les hommes dormaient, son ennemi est venu, qui a semé de l'ivraie parmi le blé, puis s'en est allé. Et après que la semence fut venue en herbe, et qu'elle eut porté du fruit, alors aussi parut l'ivraie. Et les serviteurs du père de famille vinrent à lui, et lui dirent : Seigneur, n'as-tu pas semé de la bonne semence dans ton champ ? d'où vient donc qu'il y a de l'ivraie? Mais il leur dit : c'est l'ennemi qui a fait cela. Et les serviteurs lui dirent : veux-tu donc que nous y allions, et que nous cueillions l'ivraie? Et il leur dit : non; de peur qu'il n'arrive qu'en cueillant l'ivraie, vous n'arrachiez le blé en même temps. Laissez-les croître tous deux ensemble, jusqu'à la moisson; et au temps de la moisson, je dirai aux moissonneurs : cueillez premièrement l'ivraie, et la liez en faisceaux pour la brûler; mais assemblez le blé dans mon grenier.

Հոգեւոր Հովիւի Պատգամը

**«Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն՝
որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում»: (Մատթ. ԺԳ 24)**

Ահաւասիկ, սիրելիներ, իբրեւ այսօրուան հոգեւոր կերակուր Մատթէոս աւետարանիչի շրթունքերով ինչ առակ պատմեց մեր Տէր Յիսուս՝ երկինքի արքայութիւնը բացատրելով ու նմանցնելով մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ սերմանելու ելած էր: Արդար եւ մաքուր ցորեն ցանել տուած էր՝ ակնկալելով առատ բերք ստանալ: Սակայն ան հարեւան արտին մէջ թշնամի մը ունէր, որ, չարութեամբ լեցուած ու դրդուած, գիշերով կու գայ եւ որոմ կը ցանէ՝ ապականելով ողջ արտը: Քանի որ աճելու ընթացքին որոմը շատ չի տարբերիր ցորենի հասկէն, որոմները նկատելի կը դառնան, երբ ցորենի հասկերը ցողուն կու տան: Ագարակատէրը կ'արգիլէ սպասաւորներուն ցանկութիւնը՝ արմատախիլ ընելու եւ զատելու որոմը ցորենէն՝ ըսելով, թէ հունձքի ատեն կը զատենք, քանզի հիմա մաքրելը կրնայ ցորենն ալ վնասել:

Սիրելիներ, առակին մէջ պատմուող արտը մեր աշխարհն է, որ իբրեւ տնտեսութիւն տրուած է մարդուն՝ ստեղծագործաբար մշակելու եւ հոգ տանելու անոր: Արդար ցորենը առաքինի ու բարեպաշտ մարդիկն են, որ իրենց աստուածահաճոյ կեանքով կը կարողանան ցորենին նման առատ արդիւնք տալ, իսկ մեր ընդհանուր թշնամին սատանան է, որ ամէն քայլին առիւծի նման կը մռնչայ՝ կամենալով կործանել մեզ: Որոմի վատ սերմերը անօրէնութեան եւ Աստուծոյ հակառակող չարի ծառաներն են, եւ երբ հունձքը կը հասնի, այսինքն՝ աշխարհը իր վախճանին, հրեշտակները մանգաղելով կը սկսին զատել բարի սերմը չարէն, ազնիւ պտուղը՝ կեղծէն, արքայութեան վաստակը արդար շտեմարաններու մէջ ժողվելով, իսկ դժոխքի բաժինը՝ յաւիտեանս այրելու:

Այսօր մեր այս աշխարհին մէջ, խառնակ վիճակով, կ'ապրին եւ՛ անօրէնութեան, եւ՛ արդարութեան որդիներ, եւ՛ բամբասող, դատող, չներող, հպարտացող, նախանձող, հայհոյող, վնասատու հոգիներ, եւ՛ ասոնց կողքին՝ սակաւախօս, իմաստուն, ներող, ողջախոհ, արդարախօս, կեանք տուող ու բարեմիտ հոգիներ՝ պատրաստ ամէն

տեսակ սիրահորդ գործերու: Սակայն տեսէք, Աստուած՝ մեր բոլորին Արարիչն ու Դատաւորը, կը թոյլատրէ այսօրինակ կենցաղակերպը՝ սպասելով, որ օրին մէկը Աստուծոյ գութը իրենց վրայ հասնելով, իրենք ալ երկինքի արքայութիւն կը սերմանեն այստեղ՝ այս աշխարհին մէջ, մեր միջավայրին մէջ, ընտանիքին մէջ, եւ ինչու չէ՝ նաեւ անձնական կեանքին մէջ, որպէսզի այս ամէնը անդրադառնայ մեր հանդերձեալ վիճակին:

Սիրելիներ, այսօր մեր սրբազան նախնեաց կարգաւորութեամբ Սուրբ Աստուածամօր իւրայատուկ տօներէն մէկն է, Անոր գործածած տուփին տօնը, որ իր վերափոխուելէն ետք գտնուած է երկու ուխտաւոր իշխաններու կողմէ, որոնք արեւաշատ եւ կանաչազարդ առաւօտ մը Գալիլեայի երկնախառն ծովեզերքին կը հիւրընկալուին հրեայ կնոջ մը մօտ: Գիտէ՞ք, թէ ինչու Երուսաղէմէն՝ տիեզերական ուխտավայրերու կեդրոնէն կ'երթային Գալիլիա, ուր շրջած եւ քարոզած էր մեր Տէրը, քանզի այնտեղ Դաւիթ մարգարէի խօսքը իրականացաւ. այնտեղէն երկինքն ու երկիրը կը պատմեն Աստուծոյ փառքին մասին: Տէրը այնտեղէն աշակերտներ ընտրած էր, այնտեղ առաջին հրաշքը գործած էր՝ ջուրը գինիի փոխելով, այնտեղ՝ նոյն վայրերուն մէջ աղօթական թախծոտ ու երջանիկ հայացք նետած էր, երբ ժողովուրդին կ'ուսուցանէր կեանքի ճշմարիտ ճանապարհը:

Այս Տէրունակոխ բնութեան կենսատու եւ կենագործող ուժին տակ կ'ապրէր այն հրեայ կինը, որ կը պահէր Աստուածամօր գործածած տուփը, որուն մէջ, ըստ աւանդութեան, Ս. Կոյսի անապակ գլխաշորը դրուած էր, այն գլխաշորը, որուն հետ Ան Տիրոջ հետ երկխօսութեան՝ աղօթքի կանգնած էր, եւ անոր համար ալ այդ տուփը աղօթքին սրբագործող ուժով բազմաթիւ հրաշքներ ալ գործած էր: Իշխանները, կրկնօրինակը պատրաստելով, իրական տուփը կը տանին նախ Երուսաղէմ, ապա մեծ հանդիսաւորութեամբ կը տեղափոխեն Բիւզանդիայի մայրաքաղաք՝ Կ. Պոլիս, ուր Պատրիարքը տօնակատարութիւն կը հաստատէ՝ խորհուրդը սերտօրէն կապելով մեզի հետ, որովհետեւ այս տնտեսութեան մէջ իւրաքանչիւրս աստուածաստեղծ տուփեր ենք, որոնց մէջ կեանքի զարգացումի ընթացքին Աստուծոյ իմաստութեան լոյսի սերմերը կը ցանուին, եւ գիտէ՞ք, օրեր առաջ մենք, իբրեւ մէկ Եկեղեցի, միասնաբար տօնախմբեցինք Աստուածային ճշմարտութեան ճառագայթներու թարգմանիչ Ս. Սահակ Հայրապետի եւ Ս. Մեսրոպ Վարդապետի յիշատակը, որոնք իրենց ճգնակեաց եւ սրբակենցաղ անձերով, 1600 տարիներ առաջ, Հայոց աշխարհին մէջ Գիր հորդեցին եւ իրենց կեանքով, խօսքով, գրիչով ու աւիւնով Աստուծոյն թարգմանեցին՝ ճանչցուցին խրատն ու իմաստութիւնը եւ, մանաւանդ, իմացուցին մեծ հանճարներու խօսքերը:

Բայց ո՞ւր են հիմա, ո՞ւր են այդ արդար սերմերը, մի՞թէ մեր՝ տուփերուն մէջ ծածկուած են չար ու անօրէն որոմներով, մի՞թէ մենք թոյլ տուած ենք, որ մեր կենցաղը նիւթականանայ, աղտոտի ու ճահճանայ մեր օրուայ աշխարհային հոգերով:

Հունձքի ժամանակ երբ իբրեւ անօթներ կը ներկայանանք Տիրոջը, քննուելու ենք, եւ մեր գործերու պտուղները հատ-հատ զատուելու են ըստ մեր վաստակին եւ ծառայութեան արդիւնքին:

Ուստի այսօր, քանի դեռ ժամանակը մեր ձեռքին մէջն է, եկէք՝ միասին քննենք մեր խիղճն ու հոգին՝ տեսնելու, թէ ի՞նչ կրնայինք ընել, որ չըրինք, եւ Տէրոջ ընձեռած այսօրուան յիշեցումէն օգտուելով՝ շտկենք մեր կեանքը ու ճիշդ հասկնանք Աստուծոյ արդարութիւնը, ընկալենք Փրկիչին շնորհքը, սէրն ու խաղաղութիւնը եւ ընդունինք «Քրիստոսին իբրեւ օրէնքի վախճան բոլոր հաւատացեալներուն համար»:

Տէրը կը սպասէ, որ Աստուածամօր օրինակը, իր խոնարհ, հեզ, համբերող, չնախանձող, ողջախոհ եւ սուրբ կերպարով, կենդանացնենք մեր մէջ եւ արդարանալու ձգտումով, մաքուր ու արդար ցորենի պէս ներկայանանք Աստուծոյ:

Տէրը գրկաբաց կը սպասէ, մնացեալը մեր ընելիքն է:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան
Հոգեւոր Հովիւ

"Le royaume des cieux est comme un homme qui a semé une bonne semence dans son champ." Matthieu 13:24

Bien-aimés, quelle parabole que notre Seigneur Jésus a racontée aujourd'hui par les lèvres de l'évangéliste Matthieu, expliquant le royaume des cieux et le comparant à un homme qui avait semé une bonne semence dans son domaine. Il avait semé du bon blé, s'attendant à une récolte abondante. Cependant, il avait un ennemi dans la zone voisine rempli de malveillance et d'incitation, est venu la nuit et a semé de l'herbe, détruisant tout le champ. Comme la croissance des mauvaises herbes ne diffère pas beaucoup de celle des épis de blé, les plantes deviennent visibles lorsque les épis de blé dégagent une tige. Le propriétaire interdit aux domestiques de vouloir déraciner et séparer les mauvaises herbes du blé, en disant que nous les séparerons pendant la récolte car maintenant le nettoyage peut aussi endommager le grain. Bien-aimés, le champ de la parabole est notre monde, qui est donné à l'homme comme une économie pour cultiver et prendre soin de lui de manière créative. Le bon blé est un peuple vertueux et bienveillant qui, par sa vie pieuse, peut produire des résultats aussi abondants que le blé. Notre ennemi commun est Satan, qui, à chaque pas, rugit comme un lion, voulant nous détruire. Les mauvaises graines de la chasse sont les serviteurs du mal et de la méchanceté de Dieu, et quand la moisson vient, c'est-à-dire la fin du monde, les anges commencent à séparer la bonne semence du mal, le fruit honnête du faux , le mérite du royaume brûlant dans les excellents magasins, et la part de l'enfer. Dans ce monde troublé, les fils de l'anarchie et de la justice vivent dans un état de confusion, bavardant, jugeant, impitoyable, fier, envieux, maudissant, blessant les âmes, et à côté d'eux, peu, sages, indulgents, saluant - réfléchis, justes, la vie - des âmes généreuses et bienveillantes, prêtes pour toutes sortes d’actions aimantes. Mais regardez, Dieu, le Créateur et le juge de nous tous permettons ce mode de vie aujourd'hui, en espérant que la miséricorde de Dieu viendra sur eux, et ils aimeront le royaume des cieux ici, dans ce monde, dans notre environnement, dans la famille . Et pourquoi pas, même dans la vie

personnelle, pour que tout cela affecte notre situation actuelle. Les bien-aimés, aujourd'hui, sont l'une des fêtes spéciales de la Bienheureuse Vierge Marie, organisées par nos saints ancêtres pour être accueillies par une femme juive. Savez-vous pourquoi nous avons voyagé de Jérusalem, le centre du pèlerinage cosmique, en Galilée, où notre Seigneur a marché et prêché, et la parole du prophète David a été accomplie? De là, les cieux et la terre racontent la gloire de Dieu. Le Seigneur avait choisi des disciples à partir de là, y avait fait le premier miracle, changeant l'eau en vin, et là, aux mêmes endroits, il avait un regard de prière triste et heureux quand il enseignait au peuple le vrai mode de vie. Selon la tradition, la femme juive gardait la boîte utilisée par la Mère de Dieu, et quand le foulard de la vierge était en place, elle priait en dialogue avec le Seigneur. Pour cette raison, elle a également accompli de nombreux miracles avec le pouvoir de la prière sanctifiante. Les princes, en faisant une copie, apportent d'abord la boîte d'origine à Jérusalem, puis avec une grande solennité à la capitale de Byzance, Constantinople. Là, le patriarche établit une célébration en associant étroitement la Sainte-Cène avec nous. Dans cette économie, chacun de nous est une boîte créée par Dieu dans laquelle les graines de la sagesse de Dieu sèment au cours de la vie. Il y a quelques jours, nous, l'Église, en tant que Traducteur des Vérités Divines du Divin Sahak Hayrapet et à la mémoire de Mesrop Vardapet, qui, avec leur peuple travailleur et pieux, avons écrit le monde arménien il y a 1600 ans et traduit Dieu-Mer avec leur vie et leurs mots. Reconnaissant leur discipline et leur sagesse et surtout apprenant des termes de ces grands génies. Mais où sont-ils maintenant, où sont ces graines? Nos boîtes sont-elles couvertes de proies maléfiques et illégitimes? Avons-nous permis à nos vies d'être matérialisées, polluées et submergées par les esprits mondains de notre époque? Pendant la moisson, nous nous présentons au Seigneur comme des vases, nous serons testés, et les fruits de notre travail seront divisés en fonction de nos gains et du résultat de notre ministère. Aujourd'hui, tant que le temps est entre nos mains, examinons ensemble notre conscience et notre âme pour voir ce que nous aurions pu faire que nous n'avons pas fait, et utilisons le rappel d'aujourd'hui donné par le Seigneur pour corriger nos vies et comprendre la justice de Dieu. Acceptons la grâce, l'amour et la paix du Sauveur et acceptons "Christ comme la fin de la loi pour tous les croyants". Le Seigneur attend de nous que nous animions l'exemple de la Mère de Dieu, avec son image humble, douce, patiente, inflexible, sensible et sainte, et que nous nous présentions à Dieu aussi pur que le blé avec le désir d'être justifié.

Le Seigneur attend à bras ouverts, le reste dépend de nous.

Avec mes bénédictions
Rév. Père David Margaryan
Prêtre Paroissial

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտէի՞ք թէ.-

- **Քանի որ մկրտուած չեմ, բնականաբար, չեմ կրնար հաղորդուիլ, բայց արդեո՞ք կրնամ ներկայ ըլլալ Ս. Պատարագին:**
  Ս. Պատարագի ժամանակ՝նախքան բուն խորհուրդին կատարումը, սարկաւագը բարձրաձայն կ'ըսէ. **«Ո՛չ մէկը երախաներէն (այսինքն՝ չմկրտուածներէն), ո՛չ մէկը թերահաւատներէն եւ ո՛չ մէկը ապաշ-խարողներէն թող չմօտենայ աստուածային այս խորհուրդին»:** Հին ժամանակներուն նմանատիպ մարդիկ սարկաւագի այս յորդորէն յետոյ դուրս կու գային դէպի գաւիթ կամ կը կանգնէին եկեղեցւոյ դռան մօտ եւ այնտեղէն կը հետեւէին սրբազան արարողութեան: Եկեղեցւոյ ներսը կը մնային միայն արժանաւորները, որոնք Ս. Հաղորդութիւն պիտի ստանային: Անկասկած, Ս. Պատարագը կ'ամբողջանայ Ս. Հաղորդութեան բաշխմամբ եւ հաւատացեալ-ներու ճաշակմամբ, այդ պատճառով ալ Եկեղեցին կը յորդորէ պատրաստ ըլլալ՝ գործօն մասնակիցը դառնալու Տիրոջ Մարմինին եւ Արեան խորհուրդին: Այսօր ալ սարկաւագի պատուէրը կը լսենք ամէն Պատարագի ժամանակ, սակայն դուրս չենք գար եկեղեցիէն: Մեր խորհուրդն է՝ անպայման, առանց տատանումի մկրտուիլ եւ դառնալ քրիստոնեայ, որպէսզի հնարաւորութիւն ընձեռուի ճաշակելու Տիրոջը եւ զգալու ոչ միայն Անոր անսահման քաղցրութիւնն ու օրհնութիւնը, այլ նաեւ Ս. Հոգիի շնորհներուն հեղումը մեր վրայ: Չմկրտուած վիճակին մէջ Ս. Պատարագին ներկայ ըլլալը կը զրկէ մեզի Տիրոջ հետ միաւորուելէն եւ Անոր հետ հաղորդակցելէն:

- **Ի՞նչ է Ս. Հաղորդութեան նիւթը:**
  Հայոց Եկեղեցին այս խորհուրդին համար կ'օգտագործէ հաց եւ գինի: Հացը պէտք է պատրաստուած ըլլայ ցորենէ եւ ոչ գարիէ կամ կորեկէ, ինչպէս նաեւ անխմոր, այսինքն՝ բաղարջ: Իսկ Ս. Պատարագի գինին պէտք է ըլլայ խաղողի անապակ գինի: Ինչպէս Ս. Գրիգոր Տաթեւացին կ'ըսէ. **«Հաղորդութիւնը խորհուրդ է, որ իր մէջ կը պարունակէ Քրիստոսին հացի եւ գինիի տեսքով, եւ երկուքին մէջ ալ Քրիստոս առկայ է ամբողջապէս»:**

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Ով անճառելի բնութիւն, արարչակից եւ համագոյ, միասնական Սուրբ Երրորդութիւն, զոր դաւանելու մէջ երբեք չերկմտեցայ, զոր սիրեցի եւ կը պաշտեմ իմ մանկութենէս, որու փրկութեան յոյսը զիս կ'ուրախացնէ, զոր յիշելով միշտ կը մխիթարուիմ զիս խեղդող խաւարային տրտմութենէս:
Այցելէ քու ծառայիդ, որպէսզի առիթ չտրուի նենգաւոր սատանային պարծենալու իմ հանդէպ յաղթութեամբ:
Օգնական եղիր ինծի, մանաւանդ երբ իմ դէմս կը պատերազմի նենգ թշնամին, որովհետեւ իմ մարմնի եւ մտքի ուժս տկար է անոր չար խորհուրդներուն առջեւ:
Քեզմով մարտնչելովս, սակայն, կը տկարանայ վիշապը եւ ամօթահար կը հեռանայ, եւ ես Քու շնորհիւդ կը կենամ գլուխս բարձր եւ բերկրութեամբ լեցուն, որովհետեւ անհնար է որ Քեզ կրողները եւ Քու անունովդ խրախուսողները չյաղթեն չարին, այդպիսով իրապէս արժանի դառնալով կոչուելու քու ծառաներդ:
Թող իմ բերանս լեցուի գոհութեամբ օրհնելու Քու փառքդ, Ամենասուրբ Երրորդութիւն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

PRIÈRE A LA SAINTE TRINITÉ

Ô nature merveilleuse, consubstanielle au Créateur, Trinité Sainte et une, que je n'ai jamais manqué de confesser, que j'ai aimée, et que je sers depuis mon enfance, dont l'espérance du salut me réjouit toujours, qui me console toujours de la morosoité étouffante et enténébrée lorsque je l'invoque, visite ton serviteur, afin d'empêcher le Malin de se glorifier de m'avoir terrassé. Fortifie-moi et surtout, combats pour moi ce champion implacable et cruel, car mon corps et mon esprit sont faibles face à ses mauvais desseins. Mais lorsque je lutte à tes côtés, le dragon s'affaiblit et, honteux, disparait, et moi, grâce à Toi, je garde la tête haute et suis rempli de joie, puisque ceux qui Te portent et qui sont encouragés par l'invocation de ton Nom peuvent le vaincre, et que, ceci étant accompli et scellé en vérité, je suis digne d'être appelé ton serviteur.
Que ma bouche s'emplisse alors de louanges, afin de bénir ta gloire, Père véritable de ton Fils Unique, Verbe incarné du Père, Seigneur et Saveur du monde, Saint-Esprit de Dieu, communiant au Père et au Fils dans toutes les grandeurs et toutes les œuvres, identique en nature, vrai Dieu de Dieu, maintenant et toujours et dans l'éternité de l'éternité. Amen.

Տօներ

Շաբաթ, 4 Յուլիս 2020

Ս. Տրդատ թագաւորի, Աշխէն Թագուհիի եւ Խոսրովիդուխտ Կոյսի Յիշատակութեան Օր

Հայոց Արշակունեաց Տրդատ արքան առաջինն էր աշխարհի մէջ, որ 301 թուականին Քրիստոնէութիւն ընդունեց երկրին Պետական կրօն՝ դառնալով Քրիստոնէութեան տարածման մեծագոյն ջատագովը Հայաստանի մէջ: Անոր անունին կողքին պատմութիւնը կը յիշատակէ նաեւ՝ Աշխէն թագուհիին եւ թագաւորաքոյր Խոսրովիդուխտ կոյսին անունները:

Saturday, July 04, 2020

Commemoration of Sts. Tiridates, King of Armenia, Queen Ashkhen and Princess Khosrovidoukht

In 287 A.D. Tiridates (Trdat), from the royal house of Arshakouni, assumes the throne which once belonged to his father and becomes Tiridates III, King of Armenia. His name is inextricably linked with the Patron Saint of the Armenian Church, St. Gregory the Illuminator. In 301 A.D. the king releases the Christian Gregory from imprisonment and proclaims Christianity to be the State Religion of Armenia. In doing so, the king becomes the greatest advocate of spreading Christianity throughout the country.

The names of Queen Ashkhen and the King's sister, Khosrovidoukht are closely related to the Great Conversion of Armenia as well. Princess Khosrovidoukht's vision of a cure for the King's incurable illness causes St. Gregory the Illuminator to be liberated from the dungeon of the deep pit. Gregory then is free to begin the process of spreading the light of Christianity, which is the Gospel of Jesus Christ.

According to Greek historian Agathangelos, the King, the Queen and the Princess meet St. Gregory upon his return from Caesarea, to where he had traveled to receive episcopal ordination. Following a period of fasting and preparation, Gregory baptizes the three of them. They are followed by the baptism of the royal court and the nobles of Armenia. Through the baptism by Gregory, Tiridates becomes the first king in the world to rule over a Christian country. History also reveals that Tiridates, Ashkhen and Khosrovidoukht personally participate in the construction of the Cathedral of Holy Etchmiadzin. The stones they used to build the cathedral were brought to Vagharshapat from the slopes of Biblical Mount Ararat.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

SERVICE FOR THE REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
ԿԻՐԱԿԻ, 5 Յուլիս 2020

Տիկ. Անահիտ Կիւրնակիւլ
Տ. եւ Տիկ. Հերման եւ Գարմէն Մինասեան
եւ զաւակները՝ Թանիա եւ Ալեքսիա
Պրն. Յովակիմ Կիւրնակիւլ
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտ կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝
ՍԱՐԳԻՍ ԿԻՒՐՆԱԿԻՒԼԻ
(SARKIS GURNAGUL)
Մահուան 40-ին առիթով:
(Հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ):

Պրն Ռոպէր Սէմերճեան եւ ընտանիքը
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հարազատին
ԻՐՄԱ ՍԷՄԵՐՃԵԱՆԻ
(IRMA SEMERCIYAN)
Մահուան 22-րդ տարելիցին առիթով:

Պապոյեան ընտանիքի
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց
ԹԱԳՈՒՀԻ
ՍԱՀԱԿԵԱՆ ՊԱՊՈՅԵԱՆԻ
(TAKOUHIE SAHAGIAN BABOYAN)
ՂԵՒՈՆԴ ՊԱՊՈՅԵԱՆԻ
(GHEVONT BABOYAN)

Ինչպէս նաեւ
ՊԱՊՈՅԵԱՆ ԵՒ ՍԱՀԱԿԵԱՆ
(BABAOYAN & SAHAGIAN)
Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:

Պրն. Արթօ Մանուկեանի եւ զաւակներուն՝
Արէնի եւ Լոռիի,
Տիկ. Սօնիա Գալէմճեան Սէմէթիէի եւ զաւակներուն
Տ. եւ Տիկ. Արմենակ եւ Սիւզան Գալէմճեանի
եւ զաւակներուն
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ հարազատին՝
ԱՆԻ
ԳԱԼԷՄՃԵԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(ANI KAEMJIAN MANOUKIAN)
Մահուան 2-րդ տարելիցին առիթով:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

Ուշադրութիւն

Մեր սիրելի հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմէական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Եկեղեցւոյ Գրասենեակ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.

Church Office

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON À L'ÉGLISE

DONATION FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC

Donations of June-July have been received with great appreciation 2020

CHURCH:

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian $200
Mr. & Mrs. Kevork & Maral Partamian $100
Dr. & Mrs. Arshavir & Nadia Gundjian $100
Mrs. Vartouhie Balian $100
Mr. Vicken Dakessian $100
Mr. Levon Simonyan $50
Mr. Melki Keoprulian $50
Mrs. Sylva Amadouni $20

IN MEMORY OF:

THE LATE ARCHBISHOP VAZKEN KESHISHIAN:

Mr. & Mrs. Robert Semerciyan $200

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Robert & Zaruhi Kechayan $100

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE KRIKOR MERAKYAN:

Mr. & Mrs. Aveds Djihanian $50
Dr. & Mrs. Arshavir & Nadia Gundjian $50

THE LATE SARKIS GURNAGUL:

Mrs. Siruhi Migrditsian $100

HOKEHANKISD
(REQUIEM SERVICES)

IN MEMORY OF:

THE LATE HILDA MAMOURIAN:

Mr. & Mrs. Arsen & Lucy Mamourian $100

THE LATE HASMIG NICOGHOSIAN:

Mr. & Mrs. Raffi Nicoghosian $100

THE LATE SIRARPI KAZAN:

Mr. & Mrs. Hagop & Anoush Kazan $100
Mr. Nazaret Sahakian $100
Mr. Toros Kilavuz $50
Mr. & Mrs. Robert Kilavuz $50
Mr. Raffi Frengul $50

THE LATE GARBIS FERAH:

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian $40

ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԵՐ

Մեծագոյն աղքատութիւնը սրտի եւ հոգիի աղքատութիւնն է:
Մայր Թերեզա

Աշխատանքի պարգեւը, վարձատրութիւնն է, ո՛չ թէ հանգիստը, այլ աւելի շատ աշխատանքը: Ծուլութիւնը կրնայ հրապուրիչ թուալ, սակայն աշխատանքն է, որ բաւարարուածութիւն, գոհութիւն կու տայ:
Աննէ Ֆրանկ

Հոռետեսը կը գանգատի քամիէն, լաւատեսը կ՚ակնկալէ, թէ ան կը փոխէ իր ուղղութիւնը, իրատեսը կ՚ուղղէ առագաստները:
Ուիլեամ Ա. Ուարդ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

Յուլիս– Juillet

6, Երկուշաբթի – Սրբոցն Կալիստրատոսի, քառասուն եւ ինն վկայիցն եւ Ղունկիանոսի քահանային:
Lundi 6 – Jeûne. Fête de Saint Calistrate, des 49 martyres et du prêtre Lucien.

7, Երեքշաբթի – Սրբոյն Զաքարիայի մարգարէին:
Mardi 7 – Jeûne. Fête du Saint Prophète Zacharie.

8, Չորեքշաբթի – Պահք
Mercredi 8– Jeûne

9, Հինգշաբթի – Սրբոյն Եղիսէի մարգարէին:
Jeudi 9– Fête du Saint Prophète Elisée.

10, Ուրբաթ – Պահք
Vendredi 10 – Jeûne

11,Շաբաթ– Սրբոց երկոտասանից առաքելոցն Քրիստոսի եւ Սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ առաքելոյն:
Samedi 11 - Fête des Saints 12 Apôtres du Christ et de Saint Paul, le treizième.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար

St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Տօն Պայծառակերպութեան Յիսուս Քրիստոսի

Transfiguration de Notre Seigneur Jésus-Christ

Հրաժեշտի
Սուրբ եւ Անմահ Պատարագ
Մեկնումէն առաջ

Պատարագիչ եւ քարոզիչ՝
Արժ. Տ. Գէորգ Քինյ.Աբեան

Կիրակի, 19 Յուլիս 2020
առաւօտեան ժամը 10:30-ին:

La dernière Sainte Messe
Avant le départ
Célébration et l'homélie:
Rév. Père Gevorg Apyan
Dimanche, le 19 Juillet 2020 à 10h30

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
E-mail : stgregorychurch@gmail.com Web. Saintgregory.ca

ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Շաբաթ, 25 Յուլիս 2020

ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

Samedi, le 25 Juillet 2020

Office du soir à 17h00.